Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

(3 հուլիս 1983 թ.)

Ձերդ Սրբություն, շատ սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Վաղուց ի վեր հոգեկան հրճվանքով սպասում էինք այս պահին, երբ եղբայրական հարազատ սիրով պիտի ողջունեինք Ձեզ, սակայն ցավ ենք հայտնում, որ առողջական պատճառով չկարողացանք անձամբ մասնակից լինել Ձեր ուրախությանը այս օրերին, երբ Վրացական քույր Եկեղեցին իր հավատացյալներով հանդիսավոր կերպով նշում է Գեորգիևյան պայմանագրի 200-ամյակը և Վրացական ուղղափառ Եկեղեցու կաթողիկոսական սուրբ Աթոռի ինքնագլխության 1500-ամյակը:

Երկու տոնախմբումներ, որոնք Մեր սիրտը լցնում են ուրախությամբ և ոգևորությամբ: Երկու տոնախմբություններ, որոնք խորհրդանշում են վրաց եղբայրական ժողովրդի և նրա պատմական Եկեղեցու մեր օրերում նոր վարթոնքը, նոր ճառագայթումը:

Արդարև, Գեորգիևյան պայմանագրով Վրաստանի ինքնակամ միացումը Ռուսաստանին, պատմական փրկարար իրադարձություն հանդիսացավ վրաց ժողովրդի համար, որով նա ապահով և անվտանգ պայմաններում կարողացավ անկաշկանդ զարգացնել իր ազգային դպրությունն ու մշակույթը, հոգևոր և

նյութական նորանոր արժեքների ստեղծումով: Այս նշանակալից իրադարձությունը մեկընդմիշտ դարբնեց ռուս և վրաց ժողովուրդների հավիտենական բարեկամությունը:

Վրացական ուղղափառ Սուրբ Եկեղեցին և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին առաքելական քույր Եկեղեցիներ են, գրեթե նույն օրերին կյանքի կոչված, երբ հայ և վրաց ազգերը իրենց սրտերը բացեցին Քրիստոսի Ավետարանին և լույսովը Անտուծո Որդու լուսավորեցին իրենց կյանքն ու պատմությունը: Նրանք դարեր շարունակ միշտ հավատարիմ մնացին իրենց ճշմարիտ հավատքին և հաճախ միասին մարտնչեցին ու նահատակվեցին՝ հանուն Հիսուսի և հանուն հայրենիքի ազատության:

Մեկ համար հոգեկան մեծ մխիթարություն է հաստատել այս պայծառ իրողությունները և Մեր սրտի բովանդակ ջերմությամբ մաղթել պայծառություն ձեր պատմական ուղղափառ Եկեղեցուն և հառալել բարգավաճումն եղբայրական Սովետական Վրաստանին:

Այս հանդիսավոր առիթով մի պահ պարտք ենք համարում դիջունել Ձեզ իբրև մեծահոգի աղոթողի և անձանձրույթ գործողի, ի պահպանություն և ի պաշտպանություն աշխարհի խաղաղության դատի: Մենք բարձրորեն գնահատում ենք Ձեր խաղաղասիրական գործունեությունը և վստահ ենք, որ սիրտ-սրտի ու ձեռք-ձեռքի ձեզ հետ և մեր բոլոր քույր Եկեղեցիների հետ, պիտի շարունակենք բոլորս միատեղ աղոթել ու աշխատել, որպեսզի ի վերջո հաղթությամբ պսակվի խաղաղության մարդասիրական գաղափարը, և աշխարհի ժողովուրդները ապրեն խաղաղ համակեցությամբ և իրենց հարցերը լուծեն համերաշխ գործակցությամբ, ընդմիշտ փշրելով բոլոր տեսակի պենքերը մարդասպան ու աշխարհակործան:

Ընդունեցեք, Ձերդ Սրբություն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր անունից սրտագին շնորհավորանքներ և ամենաբարի մաղթանքներ այս պանծալի կույգ տոների առթիվ:

Անսպառ լույս և խաղաղություն գեղատեսիլ Վրաստանին, որպեսզի տաղանդաշատ ու կենսուրախ վրացական ժողովուրդը միշտ նոր բարձունքներ նվաճի քաղաքակիրթ մարդկության հորիզոնի վրա:

Հարգանք և միշտ անսպառ լույս Վրացական ուղղափառ Եկեղեցուն:

Մեր եղբայրական սերը, Մեր բարձր գնահատանքը և Մեր ջերմագին աղոթքը Ձեր կյանքի ու երջանկության համար:

«Այսօր է վոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. 117—24): Ամեն: